

Հարցեր, պարզաբանումներ

առևտրի իրականացման վայրերում ՀԴՄ-ների տեղադրման գործընթացի վերաբերյալ

ՀԴՄ-ի համար կվճարեն տոնավաճառների տերերը

- Արդյոք այս ծրագրի ֆինանսական հետևանքները անմիջապես շուկայի մասնակիցները չեն «վերցնելու» իրենց վրա

- Տեղեկացնում ենք, որ ՀԴՄ-ների տեղադրումը և ցանցի անցկացումը պետք է իրականացվի շուկաների, առևտրի կազմակերպման վայրի տերերի հաշվին և որևէ ֆինանսական ծախս չպետք է առաջացնի առևտուր իրականացնողների համար: Այսինքն առևտուր իրականացնողները որևէ գումար չպետք է ծախսեն ոչ հղմ սարք գնելու, ոչ էլ ցանց անցկացնելու համար:

Վարձավճարը չի բարձրանալու

- Արդյոք տոնավաճառների կազմակերպիչները չեն օգտվի առիթից և չեն բարձրացնի վարձավճարները, կապված նրա հետ, որ կազմակերպիչներն են ձեռք բերում ՀԴՄ սարքերը:

- Աշխատանքներ են տարվում, որպեսզի առևտրի կազմակերպիչները չբարձրացնեն վաճառատեղերի վարձավճարները: Ավելին, նրանց բոլորին կոչ ենք անում նվազեցնել գործող վարձավճարները, գոնե թե առավել փոքր, այսինքն մինչև 7 քառ. մետր վաճառատեղերի համար: Այս փոփոխությունները նպատակ չեն հետապնդում ավելացնել փոքր առևտուր իրականացնողների ծախսերը: Ընդհակառակը, մեր ուշադրությունն ավելի շատ ուղղված է լինելու խոշոր տնտեսավարողներին, մեծածախ առևտուր իրականացնողներին:

Հարկային ստուգումներ չեն կատարվելու

- Իսկ արդյոք ՀԴՄ-ների տեղադրելուն չեն հետևելու հարկայինի ստուգումները, քանի որ գաղտնիք չէ, որ շուկայի կազմակերպիչներին վճար վճարելով ներկայումս առևտրականները հիմնականում չէին առնչվում հարկայինի հետ?

- Առկա է ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 2008թվականի օգոստոսի 8-ի հրամանը, ըստ որի տոնավաճառներում, շուկաներում, առևտրի կազմակերպման այլ վայրերում ՀԴՄ տեղադրած անձանց մոտ հարկային ծառայությունը ձեռնպահ է մնալու հարկային հաշվառումների գծով ստուգումների իրականացումից մոտակա վեց ամիսների ընթացքում: Մինևույն ժամանակ տեղեկացնում ենք և խնդրում, որ իրավախախտումների կամ այլ անհանգստացնող փաստերի պարագայում զանգահարեք «թեժ գծի» հեռախոսահամարներով:

ՀՀ կառավարություն՝ 52-70-00

Հարկային ծառայություն՝ 59-46-47

Վերջում ևս մի քարի լուրն. 2 օր առաջ ՀՀ կառավարությունը հավանություն տվեց և ներկայացնում է ԱԺ օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որը պարունակում է բազմաթիվ մեղմացումներն, հաշվառումը հեշտացնող դրույթներ փոքր և միջին ձեռներեցության համար: ՀՀ կառավարությունը փաստորեն խնդրում է ԱԺ պատգամավորներին, նույնիսկ իրենց արձակուրդը ընդհատելու պայմանով հավաքվել և օգոստոսի 19-ին քննարկել օրենսդրական փոփոխությունների փաթեթ:



ՀԴՄ-ն չի ենթադրում հարկի ամենօրյա վճարում

- Արդյոք ՀԴՄ տեղադրելը և ցանցով միացնելը նշանակում է ամեն օր հարկի վճարում:

- Ոչ, դա ներկայումս դրվող պահանջ չէ: Դա հեռանկարում լուծվելիք խնդիրների շարքին է պատկանում, որն ուղղված է լինելու հարկ վճարելու գործընթացի հեշտացմանը և ժամանակի խնայողությանը: Դա ենթադրում է հարկերը վճարելու սահուն մեխանիզմ, որը կներդրվի միայն հարկատուների համաձայնության և համապատասխան տեխնիկական լուծումների պարագայում:



Խոշոր բիզնեսը կբերվի հարկային դաշտ

- Փաստորեն այս գործողություններով փոքրերի համար ծախսերի ավելացում կամ էական հարկային բեռ չի նախատեսվում, իսկ ինչ հետևանքներ են սպասվում մեծածախ առևտրականների համար:

- Առաջին նպատակը հաշվառելիության բարձրացումն է, այդ իմաստով փոքրերի կողմից մի փոքր չափի հարկերի վճարումը նաև կարևոր և պատվի հարց է բոլորի համար:

Բոլորս էլ գիտենք, որ տոնավաճառը դա վերնիսածը չէ, ինչպես նաև առևտրի կազմակերպման վայրերում միայն փոքր տնտեսավարողները չեն գործում, ում մասին խոսեցինք քիչ առաջ: Այնտեղ կան խոշոր պահեստային տնտեսություններով մեծածախ առևտուր իրականացնողներ, որոնց էլ ուղղված է հարկայինի հիմնական սլաքը:

Այստեղ հետամուտ ենք լինելու բացարձակապես բոլոր գործարքների փաստաթղթավորմանը: Դա կապահովի Հայաստանի սահմանից մինչև վերջնական սպառողը ապրանքների շարժին ու շղթային հետևելուն, որը շատ կարևոր է խոշոր բիզնեսի համատարած և հավասար հարկման համար: Ընդ ուրում այդ շղթայի մաս է կազմում նաև մաքսային ոլորտը, որտեղ ևս միաժամանակ իրականացվում են համապատասխան կարգավորումներ և խստացումներ:



Վաճառված ապրանքների հետընդունումը

- Ի՞նչ կարգով պետք է իրականացվի ՀԴՄ-ների շահագործումը ապրանքների վերադարձի և գումարների սխալմամբ գրանցման ժամանակ:

- Վաճառված ապրանքների հետընդունման և գումարների սխալմամբ գրանցման դեպքերում կատարվում են հետեւյալ ձեւակերպումները (այդ ձեւակերպումների կատարման կարգը սահմանված է ՀՀ կառավարության N1325-Ն որոշմամբ)

1. Կազմակերպությունը վաճառված ապրանքների հետընդունումը կատարվում է գնման կտրոնի հիման վրա և կազմվում է վաճառված ապրանքների հետընդունման ակտ համաձայն *Ձև N7 (կցվում է)*:

Հետընդունման ակտի հիման վրա ՀԴՄ-ի միջոցով տպվում է վերադարձի կտրոն, որը ներառում է ՀԴՄ-ի գրանցման և գործարանային համարները, ՀՎՀՀ-ն, հետ ընդունվող ապրանքների զինը, օրը ամիսը, տարեթիվը և ժամը, ինչպես նաև «Վերադարձ» նշագրումը:

Եթե վաճառված ապրանքները հետ են ընդունվում օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, ապա լրացվում է միայն վաճառված ապրանքների հետընդունման ակտը և այս դեպքում վերադարձի կտրոն չի տպվում:

2. Նույն գործողությունները կատարվում է նաև սխալ մուտքագրված գումարների գրանցման դեպքում: Այսինքն, եթե սխալը հայտնաբերվել է գնման կտրոնի փակումից հետո մինչև օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումը, ապա սխալ գրանցումից անմիջապես հետո սխալ գումարով տպված կտրոնի հիման վրա լրացվում է գումարների՝ սխալմամբ գրանցման ակտը (*Ձև N8 կցվում է*) և ՀԴՄ-ի միջոցով տպվում է վերադարձի կտրոն:

Իսկ եթե սխալը հայտնաբերվել է օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, ապա լրացվում է միայն սխալմամբ գրանցված գումարների ակտը:

3. Յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո՝ մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ, կազմակերպությունը իր հաշվառման վայրի հարկային տեսչություն է ներկայացնում տեղեկանք՝ տվյալ ամսում կատարված վերադարձի և սխալմամբ գրանցված գումարների մասին *N 9 ձևով* (կցվում է).

4. Հետ ընդունված ապրանքների գնման, գումարների՝ սխալմամբ գրանցման եւ վերադարձի կտրոնները ու լրացված ակտերի մեկական օրինակները պահպանվում են կազմակերպությունում՝ տպման (լրացման) օրվանից սկսած 3 տարվա ընթացքում.



ՀԴՄ-ն նորոգման կարիք ունի կամ սարքին չէ

- Ի՞նչ պետք է անել, եթե շահագործվող ՀԴՄ-ն սարքին չէ կամ նորոգման կարիք ունի, և իչպե՞ս իրականացնել առևտուրը այդ ժամանակ:

- ՀԴՄ-ի աշխատանքի ընթացքում անսարքություն հայտնաբերելիս՝ պատասխանատու անձը պարտավոր է անջատել ՀԴՄ-ն և դրա մասին անհապաղ տեղեկացնել իրավասու ղեկավար անձին: Իրավասու ղեկավար անձն անհրաժեշտության դեպքում սպասարկող կենտրոն է ներկայացնում հայտ՝ համաձայն N 4 ձևի՝ անսարքության վերացման համար՝ հայտի մեկ օրինակը ներկայացնելով հարկային տեսչություն:

Մինչև ՀԴՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը՝ ՀԴՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է:

Նշված միջոցառումները իրականացվելու են հետևողականորեն: Նպատակը հասարակ քաղաքացու, թոշակատուի, նպաստատուի բարեկեցության բարձրացումն է, որի գլխավոր աղբյուրը հարկային եկամուտների ավելացումն է:

**ԱԿՏ N -----
ՎԱՃԱՌՎԱԾ ԱՊՐԱՆՔԻ ՀԵՏ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

Վաճառող *
1. Անվանումը -----
2. ՀՎՀՀ -----
3. Հասցե -----

Գնորդ **
1. Անվանումը -----
2. ՀՎՀՀ -----
3. Հասցե -----

Վաճառքը ձևակերպող ՀԴՄ-ի՝

Գործարանային համարը -----

Հարկային տեսչությունում գրանցման համարը -----

Ապրանքի՝ վերադարձի (չփոխարինելու) պատճառը -----

N	Հետ ընդունված ապրանքների անվանումը	Քանակը		Միավորի գինը		Գումարը	
		թվերով	տառերով	թվերով	տառերով	թվերով	տառերով
Ընդամենը							

Հետ ընդունված ապրանքների

գնման չեկի (կտրոնի) համարը ----- տպելու օրը, ամիսը, տարեթիվը և ժամը

Ձևակերպված վերադարձի

չեկի (կտրոնի) համարը ----- տպելու օրը, ամիսը, տարեթիվը և ժամը

Վաճառող՝

Ղեկավար (անհատ ձեռնարկատեր) ----- Գնորդ՝ -----

(ստորագրություն)

(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ -----

(ստորագրություն)

«-----» ----- 200---

Ք.

* Լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը

** Եթե գնորդը քաղաքացի է, ապա բաժինը չի լրացվում

ԱԿՏ N -----
ԳՆՈՒՄՆԵՐԻ՝ ՍԽԱԼՄԱՄԲ ԳՐԱՆՑՄԱՆ

Կազմակերպության
անվանումը* -----

ՀՎՀՀ-ն -----

Գործունեության իրականացման վայրը -----

կամ տրանսպորտային միջոցի պետական գրանցման համարը -----

Օգտագործվող ՀԴՄ-ի՝
գործարանային համարը -----

հարկային տեսչությունում գրանցման համարը -----

Միսալ գումարով տպված չեկի (կտրոնի)՝
համարը ----- տպելու օրը, ամիսը, տարեթիվը և ժամը -----

սխալմամբ գրանցված գումարը -----
(թվերով և տառերով)

Ձևակերպված վերադարձի չեկի (կտրոնի)՝
համարը ----- տպելու օրը, ամիսը, տարեթիվը և ժամը -----

Կազմակերպության՝
ղեկավար (անհատ ձեռնարկատեր) -----
(ստորագրություն)

գլխավոր հաշվապահ -----
(ստորագրություն)

«-----» ----- 200---թ.

* Եթե վաճառողն անհատ ձեռնարկատեր է, լրացվում են նրա անունը և ազգանունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր հարկային պետական ծառայության ստորաբաժանման անվանումը -----

Փաստաթղթի հերթական համարը
N -----
(լրացվում է հարկային տեսչության կողմից)

ՏԵՂԵԿԱՆՔ

200---թ. ----- ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐՄԱՆ,
ՎԵՐԱԴԱՐՉԻ ԵՎ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ՝ ՄԻԱԼՄԱՄՔ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԴՄ օգտագործող կազմակերպության տվյալները՝
անվանումը* -----

ՀՎՀՀ-ն -----

Գործունեության իրականացման վայրը -----

կամ տրանսպորտային միջոցի պետական գրանցման համարը -----

հեռախոսահամարը -----

Օգտագործվող ՀԴՄ-ի տվյալները՝

գործարանային համարը -----

հարկային տեսչությունում գրանցման համարը -----

Չեղյալ համարման՝

թիվը ----- ընդհանուր գումարը -----

Կատարված վերադարձի՝

թիվը ----- ընդհանուր գումարը -----

Մխավմամբ կատարված գրանցումների՝

թիվը ----- ընդհանուր գումարը -----

Կազմակերպության՝
ղեկավար (անհատ ձեռնարկատեր) -----
(ստորագրություն)

գլխավոր հաշվապահ -----
(ստորագրություն)

«-----» ----- 200---թ.

* Եթե վաճառողն անհատ ձեռնարկատեր է, լրացվում են նրա անունը և ազգանունը:

Կազմակերպություն -----
(անվանումը և ՀՎՀՀ-ն)

Գործունեության իրականացման վայրը -----
(հասցեն, հեռախոս)

կամ տրանսպորտային միջոցի պետական գրանցման համարը -----

ՀԱՅՏ N -----

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N	ՀԳՄ-ի մոդելը	Հարկային տեսչությունում ՀԳՄ-ի հաշվառման համարը	ՀԳՄ-ի գործարանային համարը	Հրավիրելու օրը, ժամը	ՀԳՄ-ի խափանման բնույթը
1	2	3	4	5	6

Կազմակերպության ղեկավար -----
(անունը, ազգանունը, հայրանունը, ստորագրություն)

Կ.Տ.

«-----» ----- 200---թ.